Այսպիսի հիացումով է նկարագրում մի անգլիացի՝ Henry Normen:

Կլասիկ մտքով վերցրած՝ ճապոնուհուն չի կարելի գեղեցիկ անուանել, բայց նա սաստիկ գրաւիչ է, մանաւանդ իր փափուկ ժպիտով, որ երբէք չի հեռանում նրա դէմքից: Զւարթ ու կենսուրախ, եռուն ու հրապուրիչ մի արարած է դա, խիստ կանացի ու շնորհալի շարժումներով: Իզուր չէ, որ նրան «արեւելքի ֆրանսուհի» են անուանել:

Շատ շուտ են ամուսնանում ու դժբախտաբար շատ շուտով էլ խամրում:

Պատանեկան հասակից հասուն տարիքի անցնելը կատարւում է խիստ արագ: Միջին շրջան գրեթէ չկայ: Բոլոր քեզ հանդիպողները կամ թարմ ու դերատի նորապսակներ են, կամ թառամած ու կնճռոտ պառաւներ:

Իբրեւ ամուսին, ճապոնուհին յայտնի է իր հաւատարմութեամբ: Այդ հաւատարմութիւնը ցոյց տւող մի հին սովորութիւն է «սեւ ատամները». մի խիստ տգեղ բան, որ բարեբախտաբար հետզհետէ վերանում է:

Ներկած ատամներով երիտասարդ կնոջ գրեթէ չեմ հանդիպած. դրանք բոլորն էլ մեծ մասով պառաւներ են, որոնք արդէն շատ քիչ հաւանականութիւն ունեն ուրիշին դուր գալու:

Դա վերջին խորամանկ միջոցն է՝ այս տեսակ զոհաբերութեամբ իրանց ամուսնու սիրտը նորից կապւած պահելու: Մանաւանդ որ ապահարզան ստանալն էլ Ճապոնում շատ է հեշտ:

Եթէ ընաւորութիւնները իրար չեն բռնում, եթէ յագենում են միմեանցից,– կատարում են մի քանի պարզ